

Թիւ 26528
Սեպտեմբեր 20, 1979

Ազնուափայլ
Տիկին Բոգ Մէտիք
Նիւ Եորք.

Ազնիւ Տիկին Մէտիք,

Մեր զոհունակութիւնը կը յայանենք որ ձեր ներկայու-
թիւնը վայելեցինք ողբ. Հայկ Գալուրճեանի մահուան երկ-
րորդ տարելիցին եւ ծննդեան 104րդ տարեդարձին առթիւ:

Տիկին Ալիս Գալուրճեանի միջոցաւ ստացած ենք երկու
ասեղնագործ ծածկոցներ՝ ձեր կողմէ նուիրուած Ս. Վարդան
Մայր Տաճարի թանգարանին:

Այս արժէքաւոր ծածկոցները ցուցադրութեան պիտի դր-
ւին թանգարանին մէջ: Մեր ծրագիրն է որ այսպիսի եւ այլ
թանկարժէք իրեր խմբուին մէկ վայրի մէջ, Մայր Տաճարի
հովանիին ներքեւ, եւ հանրութեան ներկայացուցիչներպէս
հայկական ձեռարուեստ:

Մեր խորին գնահատանքն ու շնորհակալութիւնը կը յայտ-
նենք ձեզի այս նուէրին համար, եւ ձեզի ու ձեր հարազատ-
ներուն կը ցանկանք առաւել բաջաոողջութիւն եւ երկար
կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ